

նեան * զրի է առել այդ արձանագրութիւնը՝ որից և Ալիշանը ** Բայց Շահխաթունեան ինչպէս և Ալիշանը սխալ են ընդօրինակել:

Արձանագրութեան խոստան բառերն են՝

Այս կոմիտաս եկեղեցապան սրբոյ հօրփախմբի կոչեցայ յաթոռ սրբոյն գրիգորի շինեցի գտաճար սրբոց վկայիցս քի

Շահխաթունեանն և Ալիշան սխալ ընթերցումներ ունին. եկեղեցապան փոխանակ եկեղեցապան կարգեցայ փոխանակ կոչեցայ: Եւ շինեցի փոխանակ շինեցի: Կուցեցայ բառի սխալ ընթերցումը յառաջ է եկել այն հանգամանքից, որ արձանագրութեան այդ մասը կտրուած է, բայց այնպէս պարզ նկատելի է, * վանկը և չ առաւ ծայրը որ ամենայն հաստատութեամբ կարելի է ասել, թէ «կոչեցայ» պէտք է լինի և ոչ «կարգեցայ»:

Արձանագրութեան երկարութիւնն է 2102 մետր իսկ լայնութիւնը 60 սանտ:

Երկու արձանագրութիւններն ևս կհասնուին լուսանկարով և կհրատարակուին «Արարատ»-ի էջերում:

Այս արձանագրութիւնները մեզ համար կարեւոր նշանակութիւն ունին ոչ միայն իրենց բովանդակութեամբ, այլ և հնագրութեան տեսակետով: Հին արձանագրութիւններ ընդհանրապէս քիչ ունինք, իսկ հին ձեռագիրներ՝ իբրեւ թ. գրից այս արձանագրութիւն ստուգուած: ամենեւին ոչ: Տիկորի արձանագրութիւնը, *** եթէ իրաւ Եսայան Մանգալունու ժամանակի գործ է, ամենահինն է. երկրորդ պէտք է համարուին Կոմիտասի այս երկու արձանագրութիւնները, չհաշուելով տապանաքարերի մանր մանր արձանագրութիւնները, որոնք ստուգութեան կարօտ են (Համա. Հ. Տաշեանի «Ակնարկ մը հայ հնագիտութեան վրայ» Վիեննա 1898) եր 133—137): Ուրիշ կողմից ևս այս արձանագրութիւնները

կարեւոր նշանակութիւն ունին. նոցանից մէկը արեւելեան որմի վերայ է, իսկ միւսը արեւմտեան: Այսպիսով մենք զրական փաստեր ևս ունինք, թէ Հօրփախմբի տաճարը Հայոց մարտարապետութեան հնազոյն կոթողներից մէկն է:

Բայց Կոմիտասի նորագիւտ արձանագրութիւնից ինչպէս յիշեցինք մի երկրորդ արձանագրութիւն ևս բացում է աւագ խորանի ձախակողմեան որմի վերայ՝ աստիճաններից բարձր:

Ի թվիս 2102.

Ի պատրանութեան իշխանաց իշխանին մեծին շահնշահի և տղաւորին ևս շիրին խաթունս ու պայաւուն խաթունս ու թաւգլիս ու թաւլիս ու խոճիս ու զայիրս թողաք զհօրփախմուցս զբարակին շարիաան ևս զշահնաին բարակին հակն արդ ի մերոց կամ յաւաարաց ի մեծաց կամ ի փոքունց խափանել ջանա Եթէ հայրապետացն նզոված է կայենի ևս յուրոյի մասնակից է ևս յիր հաւատեն տպիգար է յամէն յազգէ նաւաթ է ևս աւրհնել հոյ զնայ մի ծածկեսցէ կատարիչքն աւրհնին յոյ վարհամ գրիչ (Վարս և համ փանգիրը բաժանուած են մի խաչքարով):

Այս արձանագրութեան մէջ անհասկանալի և զժուարթութեան թառեր կան. բայց ճիշդ ընթերցումն ենք տալիս, կարծեմ երկիցս և երկրորդ հաւ պարստագելուց յետոյ:

Գարեգին վարդ. Եովսէփեան.



ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Ինչպէս որոշուած էր, կիրակէ սեպտ. 20-ին Նորին ս. Օծութիւն վեհափառ. Հայրապետը վայելուչ հանդիսով եպիսկոպոս ձեռնադրեց Բարձր. Ներսէս և Գարրիէլ Տ. վարդապետներին: Հանգիսի միջոցին կարգացուեցան Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարքի կրկին գրութիւնները, որոնցով յայտնում էր, թէ Հ. Ներսէս ընտրուած է Զմիւռնիոյ տեղական և Հ. Գարրիէլ Կ. Պոլսոյ ընդհանուր կրօնական

* Ստորագրութիւն Կարապետի Էջմիածնի ևս հինգ գաւառացի Այսրասայ. I. 1842 թ. եր. 264:

** Այսրասայ եր. 238:

*** Ալիշանի նիստի եր. 132:

և քաղաքական խառն ժողովի կողմից յեպիս կոպոսութիւնս և խնդրում է Սրբ. Հայրապետին արժանացնել նոցա առաքելական շնորհաց:—Բաւականաչափ հանդիսականներ Երեւանից և այլ տեղերից ներկայ էին այս մեծաշուք հանդիսին:

Յաջորդ կիւրակէ սեպտ. 27-ին կատարուեցաւ Վեհափառ սիրեցեալ Հայրապետի Օծման հինգերորդ տարեկարծք: Շարաթ օրը նախատօնակին Նորին Սրբութիւն թափորով Մայր Եկեղեցի իջաւ և կիւրակէ ներկայ եղաւ ս. Պատարագին: Երկու յետոյ հայրապետական մաղթանք կատարուեցաւ և Միաբանութիւնն ու Ճեմարանի սաները մօտեցան ի համբոյր ս. աջոյ Տիրոջ Օծեալի: Նորին Վեհափառութիւնը պատարագից յետոյ ընդունեց միայն Ճեմարանի ուսուցչական խմբի մի քանի պաշտօնեաների և պատուաւոր հիւրերի շնորհաւորութիւնները: Պատարագիչն էր այդ օր նորընծայ Գեր. Ներսէս եպիսկոպոս Արսլանեան, որի ծախքով և հոգացուած էր Միաբանութեան հանդիսաւոր հացկերոյթը: Ծաշին ներկայ էր Նորին Վեհափառութիւնը և Ճեմարանի սաներից մէկի ուղերձը լսելուց յետոյ ելաւ՝ յայտնեց թէ որչափ դժուարանում է իւր պարզ սովորութիւնների հաճախ երկար սեղան նստել: Իւր հայրապետական օրհնութիւնը բաշխեց սեղանակիցներին և յորդորելով ազօթել իւր համար, որպէս զի միջոց ունենայ յիշատակաց արժանի մի հոգեւոր ներքին շէնք կառուցանելու: Իւր հօտի համար՝ մեկնեց: Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս առաջարկեց անմիջապէս Նորին Սրբութեան կենացը, որ և ընդունուեցաւ ոգեւորեալ կեցեցներով ու երգով: Ապա Արժ. Սիոն վարդապետ արեւմտղծութիւններ արաւ և կենաց բաժակ առաջարկեց պատարագիչ Սրբազանի համար, որ պերճախօս լեզուով իւր շնորհակալութիւնը յայտնեց Մայր Աթոռում գտած սիրալիր ընդունելութեան համար՝ իւր յօժարամտութիւնն ու սրտազին ցանկութիւնը Ամենայն Հայոց Հայրապետի միջոցաւ ընդունած շնորհն ի շինութիւն ս. եկեղեցւոյ գործ զնել բոլոր կեանքում: մինչև այժմ թերի թողածն ու զգացածը լրացնելու աշխատել ըստ կարելոյնս մնալ ինչպէս և

ձգակ է միշտ լինել՝ նորա հաւատարիմ սպասաւորը և յարելով թէ ինչպէս հոգեւորական դասի յատկապէս ս. Էջմիածնի Միաբանութեան հաւատարիմ դորձակցութիւնը Վեհափառ Հայրապետին անհրաժեշտ է, իւր բազմակարօտ հօտի հոգեւոր պէտքերը լցունելու համար՝ առաջարկեց Միաբանութեան կենացը:—Հացկերոյթին հրաւիրուած էր նաև Ճեմարանի ուսուցչական խումբը: Նոյն օրը երեկոցեան վանքի բակում բուսական ճոխ լուսավառութիւն կար և երգում էր Ճեմարանի երգեցիկ խումբն ի դրօսանա հասարակութեան:

Երկու նորընծայ Սրբազանները մեկնեցին Մայր Աթոռից Տէլէճեկեան քահանայի ուղեկցութեամբ երեքշաբթի սեպտ. 29-ին: Ողջերթ մաղթելու համար Ղազարապատի դրան մօտ ժողովուած էին միաբանակիցներից շատերը, իսկ մինչև Երեւան ընկերացաւ Թեմ. Փոխանորդ Գեր. Ներսէս արքեպիսկոպոս:

Սեպտ. 21-ին ս. Էջմիածին եկաւ Եգիպտոսի Առաջն. Տեղապահ Բարձր. Յակոբ Աշոտ Ժ. վարդապետ Փափաղեան՝ յանձնարարութիւն ունենալով ս. միւռնն տանելու իւր հեռաւոր վիճակի համար:

Հոկտ. 1-ին հասաւ Մայր Աթոռ Բարձր. Գեորգ Ժ. վարդ. իւթիւճեան, ինչ ինչ թիւրիմացութիւնների պատճառաւ ստիպուած լինելով նախ Թաւրիզ գնալ և վերադառնալ: Հայր Գեորգ գալիս է Փարիզից Վեհափառ Հայրապետի յատուկ ցանկութեամբ՝ եպիսկոպոսական աստիճան ստանալով հովիւ կարգուելու Եւրոպիոյ զանազան կողմերը ցրուած հայերի համար և եթէ կարելի է մի առաջնորդական գաւազանի ներքոյ խմբելու նոցա:

Հոկտ. 15-ին ժամանեց Մայր Աթոռ Գորւոյ Փոխանորդ Արժ. Յովհաննէս վարդ. Ծիրակունիւոր կոչուած է հեռագրով Վեհափառ Հայրապետի հրամանաւ: Հոկտ. 19-ին՝ վերադարձաւ Մայր Աթոռ ժամանակաւորապէս Մազրասայում քարոզիչ կարգուած և հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ յետ կանուած Արժ. Եփրեմ վարդապետ և հոկտ. 17-ին՝ Տաթևի փոխանորդ Արժ. Դրիգորիս վարդապետ:

Հոկտ. 21-ին Մայր Աթոռ Հասա Արմաշի Դպրեկանոց Փոխ-վանահայր և Տեսուչ Բարձր. Նզիշէ ծ. վարդ. Գուրեան որ շտապում է եպիսկոպոսական աստիճան ստանալով իւր պաշտօնատեղին վերադառնալ:

Սեպտ. 29-ին Մայր Աթոռ Հիւր եկաւ Փրանսիացի հաշակաւ որ հնարեաւ Բարսեղ Բաշ Գարիբի Վեղադարդուց-արուեստից միութեան » անդամ և քարտուղար Պ. ԿրաՓախ ընկերակցութեամբ: Կովկասի Տ. Կառավարչապետն ու Երևանի Պ. Ծահանգապետն առանձին յանձնարարութեանց աստիճանաւ որներ էին կարգել մեծանուն հիւրին առաջնորդելու համար որ ըստ արժանեցն հիւրասիրուեցաւ նաեւ Ս. Աթոռում, ներկայացաւ Վեհ. Հայրապետին զիտեց վանքում և ձեմարանում պահուած հոսթիւնները նախաձեռնեց Վեհաբանում և մեկնեց սրտագին շնորհակալութիւններով:

Անձնական զործերով Տփլիս կատարած ճանապարհորդութիւնից վերադարձել է Մայր Աթոռոյս միաբան Արժ. Նզիա վարդապետը և զէպի Նուխի ուղևորութիւնից՝ Բարեշն Նզիշէ արեղան:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Սեպտ. 28-ին արժանաւայել հանդիսով կատարուեցաւ Ծեմարանի բացման ԻԴ. տարեդարձը: Պատարագիչ էր նորընծայ Տ. Գարրիէլ եպիսկոպոս: Պատարագից յետոյ Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ հոգեհանգիստ կատարուեցաւ երջանկայիշատակ Հիմնադրի՝ Տ. Տ. Դեորդ Դ. կաթողիկոսի գերեզմանի վերայ: Նորին Ս. Օծութիւնը ներկայ էր նաեւ և իւր օրհնութեամբ բացաւ՝ կէս ժամ յետոյ Ծեմարանի հիւս. կողմում տեղի ունեցած, հաշուետուութեան հանգը: Այստեղ տեսուչ Պ. Կ Կոստանեան կարգացնեցաւ ուսումն. տարուայ համառօտ տեղեկագիրը, որ յառաջ է բերուում Արարտաի ներկայ համարում՝ հասարակութեան ուշադրութիւնը դարձնելով յատկապէս այն կէտերի վերայ, որ Ծեմարանի համար ցանկալի էր հեռաւոր կենտրոնից կարուած և հոգեւոր միութարութիւնից զուրկ՝ թեմերից աւելի

սաներ ունենալ քան այժմ՝ որ ձեմարանաւարաններին ցանկալի էր իրենց ստացած կրթութեան համապատասխան պաշտօններին՝ հոգեւորական կոչման մէջ տեսնել. որ Մայր Աթոռի ծախքը թեմեացնելու և ըստ կարելոյն շատ թուով ազգաւ մանուկներին կրթութեան միջոց մատակարարելու համար ցանկալի էր Ծեմարանի բարերարներին ցանկն ընդարձակել և որ վերջապէս այս բոլորի համար պահանջուում է հասարակութեան և նորա հոգեւորական և աշխարհական ներկայացուցիչների ջերմեանց ձեռնուում թիւնը: Ապա՝ Ծեմարանի Ուսումն. Խորհուրդի մի քանի տարի հաստատած որոշման համաձայն որով տարեդարձի օրը ուսուցիչներից մէկը պէտք է խօսէ իւր մասնագիտութեան վերաբերեալ մի ուսումնական նիւթի վերայ՝ ամբիոն ելաւ Հ. Գարեգին վարդապետ նպատակ ունենալով Խորհովիկ թարգմանչի ժամանակը և նորա զրուածների արժէքը պարզելը՝ բայց ստիպուած եղաւ չափազանց կրճատել և ամփոփել իւր բանախօսութիւնը՝ Նորին Վեհափառութեան շնորհակցելու համար: Վեհափառ Հայրապետի յատուկ ցանկութեամբ այդ ուսումնասիրութիւնը լոյս կտեսնէ Արարտաի էջերում: Հանդիսը փակեց Նորին Վեհափառութիւնը՝ օրհնելով Հիմնադրի յիշատակը օրհնելով և իւր հայրանում իրատները տալով ուսուցիչներին և աշակերտներին՝ ապարարհաճեց հանգստանալ փոքր ինչ և սուրճ վայելել Ծեմարանում: Սուրճ վայելելու հրաւիրուեցան նաեւ ներկայ միաբան հայրերը:

Ծաշի միջոցին որ հոգացուած էր պատարագիչ Դեր. Գարրիէլ եպիսկոպոսի ծախքով՝ Տ. Կարապետ վարդապետ միաբանութեան կողմից բարեմաղթութիւններ արաւ և շնորհաւորեց Սրբազանին՝ օրուայ տօնի հետ կապելով նորա ստացած բարձր աստիճանի խորհուրդը: Սրբազանը զգոյուն խօսքերով իւր շնորհակալութիւնը յայտնեց Միաբանութեան և իւր երախտագիտութեան հաւաստիքն ու հաւատարմական զգացումները մատուցանելով առ ռոս գահայից Վեհափառ Հայրապետի՝ երկուր օրեր բարեմաղթեց Նորին Սրբութեան անսասան հաստատութիւն Մայր Աթոռոյն անսպիտաք տձումն և բարգաւաճումն:

նորաճեմարանին: Երեկոցեան ճեմարանի բա-
կում շքեղ լուսավառութիւն կարեւորեցի կաւմ
բըն ու փոքրիկ աշակերանների ժողով. պարեր-
դերն ու պարերը զուարճանում էին զբօսնոց
տեղական հասարակութեան և ուխտաւորների
մեծ բազմութեան:

Հոկտ. 10 ին Ս. Թարգմանչաց տօնի օրը
ճեմարանի բոլոր աշակերանները, պ. Տեսչի և
ուսուցիչների հետ կրկին մի անգամ ռաբոյ
ուխտ գնացին Օշական Ս. Մեսրոպի գերեզ-
մանին: Պատարագիչ էր ճեմարանի ուսուցիչ
Արծ. Գարեգին վարդապետ, պատարագից յի-
տոյ եկեղեցւոյ մէջ խաչահանգիստ կատարուե-
ցաւ: Երի միջոցին Նորին Վեհափառութեան
գիւանապետ Արծ. Կորիւն վարդապետ յի-
շեցրեց Ս. Մեսրոպի և նորա բազմալստան
ընկերակիցների մեծ երախտիքը և հրաւիրեց
աշակերաններին ջանալ ամէն բանից աւելի
երախտապէս դանուելու իրենց վայելած հո-
գեւոր բարիքների համար: Զ. դաստան աշա-
կերաններից մեկը կարգաց գրաբար ուզեր՝
Եկեղեցւոյ եղնիկս աշակերաններին և ժամա-
ւորներին բաժանուեցաւ Պ. Տեսչի նուէր բե-
րած մատաղը: Ապա հացկերոյթ եղաւ վան-
քապատական ծառաստանում՝ Հ. Կորիւնի,
զիւզի քահանաների և պատուաւոր մարդոց
մասնակցութեամբ. կենացներ առաջարկուե-
ցան և ողևորուած ճառախօսութիւններով
կրկին և կրկին անգամ արծարծուեցաւ ան-
մահանուն սուրբերի յիշատակը:

ՀԱՅԿԵՆՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ Պ. ՏԵՍՉԻ

ՀԱՄԱՐՈՑ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ.

18^{97/98} ուս. շրջանի ուսումն. և անտես.
վիճակի մասին.

18^{97/98} ուս. շրջանում ճեմարանիս գի-
շերօթիկ սաների թիւն էր՝ մասնագիտական
բաժնի լսարաններում 28 զպրոցական բաժնի
դասարաններում 130, իսկ վարժոցում 25,
ընդ ամէն 183. սոցանից 13 պահուում էին
բարեբարների նուիրատուութեամբ: Վճա-
րում էին թոշակ կամ նպաստ իսկ 161
պահուում էին Մայր Աթոռի հաշուով: Գի-
շերօթիկ սաներից զատ կային նաև 33
երթեկեկ, որոնցից 10 զպրոցական բաժնի:

Իսկ 23 վարժոցի աշակերտներ էին. երթեկեկ
ընդունուում են միմիայն Վաղարշապատի
ընկերներից կամ այնպիսիներից, որոնք ապ-
րում են Վաղարշապատում իրենց մերձա-
ւոր զգականների մօտ: Ըստ այսմ ան-
ցեալ շրջանի բոլոր աշակերանների թիւն էր
216, որոնք ըստ թեմերի դասաւորուած են
այսպէս.

1. Երեւանի թեմից	63	գիշերօթիկ և	33	երթե- կեկ,	96.
2. Տաճկաստանի Հայոց թեմերից	.	.	.	.	48.
3. Վրաստանի և Իմերէթի թեմից	.	.	.	.	27.
4. Արցախու թեմից	.	.	.	.	21.
5. Բեսարաբիոյ և Ն. Նախիջևանի թեմից	.	.	.	.	9.
6. Պարսկաստանի թեմերից	.	.	.	.	7.
7. Համախու թեմից	.	.	.	.	6.
8. Ասորախանի թեմից	.	.	.	.	2.
					216.

Անցեալ շրջանում դասերն սկսուեցան
սեպտ. 9-ին և դադարեցան մայիսի 24-ին.
ուսումն շարունակուեցաւ 195 օր, այդ ժա-
մանակամիջոցում աւանդուել է 4686 դաս:
Տարուայ վերջում աշակերտների յատաճա-
ղիմութեան և թուի փոփոխութեան պատ-
կերն այս է.

	Ընդ. թիւ.	Գիշերօթիկ.	Երեկեկ.	Փոխերկն.	Մնացիկն.	Երամ.	Մնամ.	Աւարս. զպր. ուս.	Աւարս. զպ. և զնոյն.	Աւարս. մաս. բաժ.	Ան 1-ն սկսական.
Գ. բաժ.	28	10	18	21	»	7	»	»	»	»	21
Դ. բաժ.	20	15	5	20	»	»	»	»	»	»	20
	48	25	23	41	»	7	»	»	»	»	41
Գ. գ.	37	33	4	26	6	5	»	»	»	»	32
Բ.	23	20	3	17	3	3	»	»	»	»	20
Դ.	32	29	3	20	2	9	1	»	»	»	22
Ե.	24	24	»	19	5	»	»	»	»	»	24
Զ.	24	24	»	»	»	1	»	15	8	»	15
	140	130	10	82	16	18	1	15	8	»	113
Ա. Լ.	11	11	»	8	»	2	1	»	»	»	8
Բ. Լ.	12	12	»	12	»	»	»	»	»	»	12
Գ. Լ.	5	5	»	»	»	»	»	»	»	»	5
	28	28	»	20	»	»	»	»	»	»	20
	216	183	33	143	16	27	2	15	8	5	174

Անցեալ ուս. տարուայ ընթացքում ծեմարանիս մէջ իրենց անունով սաներ պահել են

1. Պ. Առաքել ծառուրեանց 3 սան.
 2. Աթամարեան Տիկ. Աննա 1 սան.
 3. Իզմիրեան պ. Նիկողայոս 1 սան.
 4. Գեորգ Լալայեանի յիշատակի համար 1 ս.
 4. Մելիքեան Տիկ. Ծոգակաթ 1 սան.
 6. Ժամհարեան պ. Իսահակ 1 սան.
 - և 7. Մարգարեարական Ընկ. ի Բագու 1 սան.
- սոցանից զատ կան կտակաւանդութիւններ և միանուագ մշտական նուիրաբերութիւններ որոնց հիման վերայ ծեմարանը պահում է սաներ այս բարերարների անունով.

1. Հանգուցեալ բժ. Գեորգ Տիգրանեանցի անունով 3 սան.
2. Հանգ. Թումայեան ամուսնոց անունով 1 սան.
3. Հանգ. Գեորգ Փրիգոնեանցի անունով 1 սան Կիէլի համալսարանում.
4. Հանգ. Եակոբ Աբամեանի և Գր. Թումայեանի անունով զարմեալ Կիէլի Համալսարանում 3 սան.

բացի այս նուիրաբերութիւններից Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցին տալիս է ծեմարանին տարեկան 5000 ռուբլի եկեղեցական սաներ պահելու համար:

Եանկալի է, որ այդպիսի բարերարների գովելի օրինակին հետեւէին կարող և ձեռնհաս ազգայինք և իրենց առատաձեռն տուրքերով ձոխացնէին Մայր Աթոռի սակաւաձեռն միջոցները ծեմարանի պահպանութեան համար:

Ծեմարանիս ուսուցիչները որոնց թիւն անցեալ տարի 13 էր, իրենց ստանձնած պարտականութիւնը կատարեցին ամենայն եռանդով և ջանասիրութեամբ. բացակայ եղել են տարուայ մէջ 89 ժամ, աւելորդ պարապել են բացակաների փոխարէն 58 ժամ, ուրեմն անպայման պարապ մնացած դասերի թիւն է 31, որից 17 հիւանդութեան, իսկ 14 այլ և այլ պատճառներով է: Մանկավարժական խորհուրդը գումարուեցաւ 15 անգամ: Դասատուութիւնից զատ ուսուցիչները կատարել են ծեմարանում նաեւ այլ պարտականութիւններ. այսպէս՝ Հ. Կարապետ վարդապետը վարել է տեսչի օգնականի պաշտօն, Հ. Գա-

րեգին վարդ. Եովսէփեանն, պ. պ. Մանգինեան Ս., Կանայեան Ս., Եովհաննիսեան Ե., Տիգրանեան Պ., Աւագեան Ե. և Եարութիւնեան Ս. վարել են նաեւ դասարանական դաստիարակի պաշտօն, բոլորն էլ անվարձ:

Անցեալ ուսումնական շրջանում տեղի ունեցան մի քանի դպրոցական տօներ և հանգէսներ ուսուցիչների և աշակերտների մասնակցութեամբ: Առաջին դպրոցական տօնին, այն է ծեմարանի տարեդարձի օրն, իւր շնորհարիւր այցելութեամբ բաղրաւոր կացոյց մեղ վեհափառ Հայրապետն Աստուածընալի Ը. Տ. Մկրտիչ Կաթմուղիկոս Ամենայն Հայոց, որ տարեդարձի հանդիսին ներկայ գտնուելով, բարեհաճեցաւ բաշխել դաստիարակներին և սաներին իւր հայրական խրատներն և ս. օրհնութիւնը: Անցեալ շրջանում երկրորդ անգամ բարեհաճեցաւ Նորին Վեհափառութիւնը շնորհ բերել ծեմարան ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի մօթին ի վերապն տօնի օրը և ունկնդրութիւն շնորհել աշակերտական բանախօսութիւններին:

Անցեալ շրջանում հօկտ. 4-ին իւր բարձր այցելութեամբ պատուեց ծեմարանս և երկրիս Կառավարչապետ Նորին Պայծառափայլութիւն իշխան Գոլիցին, Երեանու Նահանգապետ Կոմս Տիգրէհատուգէնի և այլ հետեորդների հետ միասին. Նորին պայծառափայլութիւնը ծեմարանի հանդիսարանում, ուր խմբուած էին բոլոր աշակերտները, լսեց նոցա յանուն Օգոստափառ ամենողորմած Կայսեր երգած մաղթանքը, մատենադարանում այցելուաց յիշատակարանում գրեց իւր անունը, զիտեց դասարաններն և ննջարաններն և իւր բարձր գոհունակութիւնը յայտնելուց յետոյ մեկնեցաւ:

Մատենադարանն անցեալ տարի յանձնուեցաւ ծեմարանի ընթացաւարտ Սմբատ սարկաւազի հսկողութեանը. վարչութեան ցուցմամբ վերաստուգուեցան և ցուցակազրուեցան մատենադարանի բոլոր գրքերը, որոնց ընդհանուր գումարն է 11975. նոցանից հիմնական մատենադարանում կան 5335 գիրք, որոնցից 1526 հայերէն և 2596 ռուսերէն, աշակերտական մատենադարանում կան 1977 գիրք, որոնցից 1120 հայերէն և 744

առսերէն. այնտեղ են նաև բոլոր դասադր-
քերը որոնց ընդհանուր գումարն է 4663.
Անցեալ շրջանում Մասնապարանին նուէր
ուղարկեցին մի քանի անձինք և հաստա-
տութիւններ, որոնք են

1. Մայր Աթոռի զանձարանը (հանգուցեալ
միաբանների թողած գրքերը).
2. Թիֆլիսի հրատարակչական ընկերու-
թիւնը.
3. Թիֆլիսի Հայոց Կոնսիստորիայն.
4. Պ. Յովակիմ Զաթալպաշեան.
5. Պ. Կարապետ Եղեան.
6. Իշխան Ս. Արամէլիք — Լազարեվ.
7. Դեր. Մեքսուպ արքեպիսկոպոս.
8. Դեր. Սարգիս արքեպիսկոպոս.
9. Արժ. Գրիգոր քահ. Մանգակունի.
10. Ծեմարանի ուսանողք և աշակերտք.

Եկեղեցական երգեցութեան վերայ առան-
ձին ուշադրութիւն դարձնելով Ծեմարանի
վարչութիւնն անցեալ տարի երգեցողութեան
ուսուցիչ Հ. Ղևոնդ վարդապետին օգնելու հա-
մար մի առանձին խմբապետ կարգեց Ծեմա-
րանի ընթացատար Հայկ Յովհաննիսեանին,
որ ամենայն օր հսկում էր աշակերտների նա-
խապատրաստութեան վերայ առօրեայ ժամա-
սացութեանը վարժուելու համար:

Աշակերտների առողջապահութեան վե-
րայ առանձնապէս հսկում է Ծեմարանի բը-
ժիշկ պ. Կար. Տ. Խաչատրեան. անցեալ տա-
րի աշակերտների մէջ երեցած արախումա ա-
նունով աչքացաւի առաջն առնելու համար
վարչութիւնը կարևոր դատեց հիւանդներին
հայրենիք ուղարկել, իսկ որոնց կարելի չէր,
նոցա էլ Ծեմարանի հիւանդանոցում դար-
մանել:

Աշակերտների առողջապահական կարևոր
միջոցներից մէկը նոցա ստացած առօրեայ
սնունդը լինելով, վարչութիւնը շարունակ
հետամուտ էր սկզբնաւանդ վիճակը բարեփո-
խել տալու. վեհափառ Հայրապետի բարեհաճ
անօրինութեամբ կարելի է յուսալ որ սնուն-
դի բարւոքումը հեղհեղ, համապատաս-
խան առողջապահական պահանջներին. բա-
յի մէկից ընդհանրապէս ծանր հիւանդներ
եղջ եղել Ծեմարանում և հիւանդները շնոր-

հիւ պ. բժշկի աչալըջութեան յաջող կերպով
ապաքինուել են:

Ինչ որ Ծեմարանի անտեսական ծախքե-
րին է վերաբերում, վեհափառ Հայրապետի
հաստատած նախահաշուով 1898 թուի ծախ-
քերի համար որոշուած է 39,009 ռուբլի.
այդ գումարը մասնատրոււմ է հետեւեալ պէտ-
քերի մատակարարութեան համար.

Ա. Ուսումնական վարչութեան 18571 ռուբլի.
այս գումարի մէջ են ուսուցչաց սոճիկը,
համալսարան ուղարկուած սանների թո-
շակը և ուսումնական պիտոյից ծախքը:

Բ. Պահպանութեան որդեգրաց 11069 ռուբլի.
այս գումարի մէջն են սանների հագուս-
տի, կօշիկի, անկողնի և կենսական պի-
տոյքների (բացի կերակրից) նմանապէս
Ծեմ. վառելիքի և ծրագի ծախքերը:

Գ. Տնտեսական վարչութեան 8360 ռուբլի.
այս գումարի մէջն են տեսչի, վերակա-
ցունների, քարտուղարի, բժշկի, հիւան-
դապահի և ծառաների սոճիկները.

և Դ. Անակնուհեղի մանր ծախք 1000 ռուբլի.

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Բ.

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շարաթ իրիկուն
29 օգոստոսի առաջնորդութեամբ Դպրեվանքի վար-
դապետներուն և ընծայացու սաներուն, Պատրիար-
քառանէն ուղղակի Բերայի Ս. Երրորդութիւն ե-
կեղեցին երթալով՝ իրիկուն ժամերգութեանց
ներկայ գտնուեցաւ. Յաջորդ առտու ն. Արքազ-
նութիւնը հանդիսաւոր պատարագ մատուցանելով,
Դպրեվանքի բարձրագոյն կարգի 6 սաները սարկաւագ
ձեռնադրեց և այս աթիւ պարագային յարմար
գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ:

— Կրօն. ժողովը որոշեց Առաջնորդ և Վանա-
հայր եպիսկոպոսներուն ծանուցանել որ առանց
Ազգ. Կեդր. Կրօն. ժողովի տեղեկագրելու ընաւ
երբէք չձեռնադրին կուսակրօն սարկաւագ. նոյնպէս
նաև ձեռնադրուած վարդապետներու, որոնց կրնա
մասնաւոր գաւազանի իշխանութիւն տրուել՝ ծայ-
րագոյն իշխանութիւն տալու համար պէտք է նա-
խապէս կեդրոնին հաւանութիւնը ստանալ:

— Ռոտոսթոյի Առաջնորդ Տ. Յովսէփ Ծ.

Վ. Այվազեան հարցուցած էր Կեդր. Կրօն. Ժողովին, թէ հայազգի աշխատանքի աղջիկներու ամուսնութեան առթիւ ինչ տեսակ կարգադրութիւններ ընել կարեւոր է, և թէ ամուսնանալու պատրաստուող աղջիկները իրենց գաւառութեան մէջ մնալով՝ կարելի՞ է ամուսնացնել զանոնք հայ երիտասարդներու հետ:

Կրօն. Ժողովը նկատելով որ խառն ամուսնութիւններու համար մինչև ցարդ մասնաւոր օրէնք և կարգադրութիւն չէ եղած և թէ խառն ամուսնութիւնները պաշտօնապէս չեն ծանցուած Պատրիարքարանէն, որոշեց յանձնարարել Տ. Յովսէփ Ծ. վարդապետին՝ թէ հայազգի երիտասարդներու հետ ամուսնանալ փափագող պաշտօնական աղջիկները պէտք է անպատճառ նախապէս Հայ Եկեղեցւոյ գիրկը դիմեն:

Կրօնական Ժողովին անդամ՝ Տ. Գարեգին վարդապետ Թաթարեան՝ որ երկար ատենէ ի վեր կուրծքի հիւանդութեամբ կը տառապէր, 31 օգոստոսի վախճանեցաւ:

Տ. Գարեգին վարդապետ Սամաթիոյ Սահակեան վարժարանի սաներէն էր. դպրոցական շրջանը աւարտելէն ետքը, աշակերտած է հոգեւոյն Կարապետ Պատրիարքին, որուն վախճանելէն վերջը ծառայած է Յակոբ Պատրիարքին որմէ ընդունած է վարդապետական ձեռնադրութիւնը:

Տ. Գարեգին վարդապետ Ազգ. Պատրիարքարանի մէջ պաշտօնավարած է իրր կոնդակագիր իրարու յաջորդող Պատրիարքներու. նոյնպէս վարած է Փոխնապարանի նշանատուութեան արձանագրի պաշտօնը:

1872-էն ի վեր այս չորրորդ անգամն էր որ Կրօն. Ժողովին կանգամակցէր, Հատ տարիներէ ի վեր Այաստեֆանօ քաջուած կապրէր. տեղւոյն եկեղեցիին քարոզչութիւնը վարելով:

Հանգուցեալը անդամակցած է նաև զանազան Յանձնաժողովներու, և վերջին անգամ՝ Իջմիրեանց Կոստի մնայուն Կանձնաժողովին, որմէ հրաժարեցաւ հիւանդութեան պատճառաւ:

Սեբաստիոյ Առաջնորդ Տ. Պետրոս արքեպիսկոպոս Ամասիա գտնուած միջոցին երեք եկեղեցիներու վրայ երեք քահանայ ձեռնադրեր է և Վարդուանու Ս. Աստուածածին վանքին վանահայրի փոխանորդ Իբրիանոսեան Տ. Գեորգ արեղային վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն ինչպէս նաև տեղւոյն Ժողովրդի խնդրանքով այս վերջին և տեղւոյն առաջն. տեղապահ Քրանկիւլեան Տ. Նիկողոս վարդապետին ծայրագունութեան աստիճան տուեր է:

Ամասիոյ և Վարդուանի ազգայինները Կեդր. Կրօն. Ժողովին կողմէ Վարդուանի Ս. Աստուածա-

ծին վանքի նկատմամբ տրուած որոշումէն մեծապէս գոհ մնալով, Տ. Պետրոս արքեպիսկոպոսի հետ Իբրիանոսեան Տ. Գեորգ Ծ. վարդապետ վանքը գացեր և մատակարարութեան գործը աշխարհականներէն եկեղեցական նորակազմ վարչութեան փոխանցեր են:

— Վիեննայի Միթիթարեան միարանութեան քաղաքականութեան ծանօթ անդամներէն է. Գրիգորիս Վ. Գալէմբերեան և է. Գարրիէլ Մէնէլի-շեան Կ. Պոլիս են այժմ առաջինը իւրեւ «Մեծաւոր», այսինքն ներկայացուցիչ Արքայօրէն երկրորդը իւր Տնօրէն Բանկալթիի Միթիթարեան վարժարանին:

— Աղթամարայ միարան Զատոյեան Տ. Գանիէլ վարդապետ Վանայ որբանոցները այցելած և տեղեկագիր մը ղրկած էր Պատրիարքարան, Այդ տեղեկագրէն կերեպ որ Վանայ մէջ կը գտնուին այժմ՝ չորս որբանոցներ՝ Աւարազայ, Կարմրօրի, Ամերիկեան և Փրէնքերու որբանոցները:

Աւարազայ որբանոցի վիճակը շատ գոհացուցիչ գտայ, կը գրէ Գանիէլ վարդապետ. նորանոր և ընդարձակ շէնքեր կառուցած են որոնք կը ծառայեն որբերուն իւր դասարան, ննջարան, արհեստանոց և խոհարան՝ ամէնքն ալ առողջապահական պայմաններու համաձայն շինուած. արգարե անուրանալի է արդի Հոգաբարձութեան աշխատութիւնը որ բան գործ ըրած է այս հաստատութիւնը իւր բուն նպատակին ծառայեցնելու, թէև միջոցները և պայմանները անձուկ են՝ համեմատութեամբ Արբանոցի ընդարձակութեան, Արբանոցի թիւն է 60, ամէնքն ալ մաքուր հագուած են, բաւականաչափ սննդաբար կերակուր կը վայելն, ամէնուն համար ալ պատրաստուած են յատուկ մահճակալներ. բարոյականութեան մասին ըսելիք չկայ. ուսումնական վիճակը շատ բարձր չէ, միշտ կարելի է անուանել, սակայն յառաջիկայ տարուան համար շատ խոստմնալից է. ունի 6 ուսուցիչ, դիշերապահ և սպասաւոր, որբերը կը սորվին միւսնոյն ատեն կտաւագործութիւն և հիւսնութիւն. կտաւագործութիւնը բաւական առաջ գացած է, հիւսնութիւնը նոր մուտ գտած է հաստատութեան մէջ, ջանք չը խնայուի որ սոյն երկու արհեստներուն զարկ տալու համար:

Կարմրօրայ Արբանոցը՝ որ 20 որբ կը խնամէ, աւելի կոկիկ և մաքուր է, Գալաթիայի Փանոս էֆ. որ խնամակալն է այդ փոքր հաստատութեան, շատ լաւ կը խնամէ որբերը, ասոնք ալ լաւ հագուած են, կերած հացերնին աւելի մաքուր շինուած է. մաքուր են նաև անկողինները, 1 ուսուցիչ ունին, որբերն ալ արդէն զեռ նոր սկսած են կարգաւ Մայրենի Լեզուի առաջին տարին. խնամակալը մտադիր է որբերու թիւը աւելացնել՝ երբ յաջողի վանքին հոգային կալուածը արդիւնաբեր ընել:

«Տեղւոյս Ամերիկեան որրանոցն ալ գոհացուցիչ վիճակի մէջ է: ունի 350 որր (130-ը որրուհի): որրանոցի անօրէնք տաքթ. Բէյնոլտ հեղահամայն անձ մըն է: լաւ կը խնամէ որրերը: ցաւալի է որ կրօնագիտութեան դաս չտրուիր: թէև կիրակի և տօն օրերը եկեղեցի կը զրկուին: Հոս ալ որրերը այլ և այլ արհեստներ կը սորվին:

«Շատ տխուր վիճակի մէջ գտայ Քրէրներու Որրանոցը: ամենէն խեղճը կը համարուի: Միայն տրուած անունըը գոհացուցիչ է: 20 որր ունի: անմաքրութենէն 10—15 որրերուն զուտները վերքով ծածկուած են: ուսուցիչ մը միայն ունի որ ամէն ինչ է:

Մանչեսթրի բարեսէր ազգայիններու ամսական 15 ոսկի նպաստին և Ս. Պատրիարք Հօր բարեացակամ ջանքերուն շնորհիւ: յայտնի է թէ Ազգ. Որրանոց մը ունենալու բարեազդութիւնը կը վայելէ Այնթապ որ: իբրև կեդրոն մը միսիոնարական գործունէութեան: վաղուց պէտք ունէր այսպիսի հաստատութեան մը: Շատ հաճելի էր: ուսումնական այս նոր տարեջրանի սկիզբէն բոլոր վարժարաններու հետ Որրանոցի ալ բացումը տեսնել: և թէպէտ: հակառակ Հոգարարձութեան ըրած ջանքերուն: խնդիրը պահ մը անբացօք վիճակ ստացաւ: բայց Պատրիարքարանէ զրկած նամակին և 60 լիւրային հասնելուն վրայ՝ Հոգարարձութիւնը սիրտ առած՝ սկսաւ գործը փութով առաջ մղել: Որրերու թիւը առ այժմ 40 պիտի ըլլայ: 15-ը տեղացի: իսկ 25-ը ոչ տեղացի: Ամիս առաջ արդէն՝ չըջակայ 15-է աւելի քաղաքներու հայ հասարակութեանց հոգևոր պետերուն չըջարեականները զրկուած ըլլալով: որրերը սկսան գալ և տարեկան պարէնի պէտքերն այս շաբաթ կը հոգացուին:

— Ս. Պատրիարք Հօր հրահանգին համաձայն: Աղթամարայ կաթողիկոսական Տեղապահ Տ. Արսէն վարդապետը թեմական այցելութեան ելեր է: Տ. Արսէն վարդապետ կը գրէ Պատրիարքարան թէ տեղւոյն նարեկայ որրանոցը բացուեր և անոր հըսկողութիւնը յանձնուեր է Ջատոյեան Տ. Գանիէլ վարդապետին որ: ինչպէս կը յիշուի: իր ուսումը կատարելագործած է Արմաշու Գպրեմանքին մէջ:

— Ս. Պատրիարք Հայրն որոշեց Բալուի Քաղցրահայեաց վանքին մէջ Որրանոց մը բանալ այն գումարով զոր Պ. Ջանչեանց իր տրամադրութեան տակ գրած էր այս նպատակաւ:

— Իզմիտէ կը գրեն Պատրիարքարան: թէ տեղւոյն կառավարութիւնը արգելած ըլլալով Ամրակում վարդապետին Գուրտպէլէն երթալը: յիշեալը կը մնայ Իզմիտ և իրեն առաջնորդող Հայր Սեբորէ ալ ձեռնունայն ետ դարձած է Գուրտպէլէնէ:

— Պոլսէն բաւական թուով ֆրէրներ գացած են Եւալագտէրէ և Ջանացած են համոզել տեղւոյն

ազգայինները որ: եթէ դաւանափոխ ըլլան: իրենց ամէն կարգի նիւթական օժանդակութիւն պիտի չզլացուի:

ՊԱՐՍԿԱՆՆԵՐ.

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ. *

ՈՒՐԾԻ

Սալմաստից 14 պարսկական փարսախ (90 վերստ) դէպի հարաւ գտնուում է Աւրմի կամ Աւրումի քաղաքը: համանուն լճի արեւմտեան կողմը: երեք ժամաչափ հեռի: Քաղաքը պարսպապատ է: Առու-թըրքական պատերազմից յետոյ Շէմզլիինանի շէյխ Իբրահիմը քաղաքը բազմաթիւ հրոսակախմբով արշաւեց այս գաւառների վրայ և պաշարեց քաղաքը: որ Մաքուի Թէմուր խանի օգնութեամբ հաղիւ կարողացաւ քրդական զբաւումից ազատուել: Աւրմի գաւառը կարելի է Ատրպատականի ամենից արգաւանդը համարել: արտադրում է մեծ քանակութեամբ սէրզէ: բրինձ: բամբակ և ծխախոտ: Ընդարձակ դաշտը: որ ծովի երկարութեամբ տարածուում է՝ ծածկուած է 800 գիւղերով որոնք բոլորն Աւրմեցի խաների սեփականութիւն են: պարսկաստանի ոչ մի քաղաքում չկան Աւրմիոյ չափ խաներ և աղաներ: որ ժառանգարար տէր են կալուածներին և կաշառքով ձեռք են բերում: բարձր տիտղոսներ և պատուանուններ:

Գիւղացիները ճնշուած այս աղաների ձեռքի տակ: ամբողջ տարւան չարաչար աշխատանքով հաղիւ թէ կարողանան նրանց ազահութիւնը գոհացնել: Քաղաքը գեղեցիկաշէն է: մանաւանդ խաների և աղաների պալատանման տները: քարվանսարանները: Շէհր—չայի գետը առատութեամբ ջուր է մատակարարում քաղաքին: ամեն տուն իր պարտեզն և մշտահոս ջուրն ունի: փողոցների մէկ մասը լայն և ծառաշատ է: Բնակիչներն են թուրք: հայ: ասորի և հրէայ: Թուրքերը սաստիկ մոլեռանդ են: հնազանդում են միայն իրենց սէյիդներին և մօլլաներին: շատ անգամ յարձակուում չսիրած գաւառապետի և ուրիշ պաշտօնէից վրայ և քաղաքից փախցնում: Հայ: ասորի և հրէայ ազգաբնակչութիւններն այսպիսի պարագաներին ստիպուած են իրենց խանութները փակել և տների մէջ պահուել: Չնայած որ Ամերիկացի: Քրանսիացի և Անգլիացի միսիոնարներ կան: բայց սոքա ոչ մի

կերպ չեն կարողանում մեղմել մահմեդականների մոլեռանդութիւնը:

Ամերիկացի միսիոնարները քաղաքից դուրս Շէհիր չայի վրայ մի ընդարձակ գետնում կառուցել են իրենց հիւանդանոցը: Կոլլէժը և այլ հաստատութիւններ, հիւանդների մեծ մասը ձրիաբար են խնամում. իսկ կարողութիւն ունեցող օրական 20 կոպէկ է վճարում ամեն տեսակ ծախքերի համար: Բժշկապէտ գոկ. Բէքրին իրբե վիրաբոյժ մեծ հոշակ ունի և շատ յարգուած է ամբողջ ազգաբնակչութեան կողմից: Այս հաստատութիւնները բոլորը միասին Ալաա են կոչուում: Ահբէին երկու տարին նպաստները պակեցրել և կոլլէժը հասարակ վարժարանի են վերածել: հիւանդանոցն ևս յունիսի սկզբից պէտք է փակուէր. մեծ դժբախտութիւն է այս քանի որ ամբողջ Ատրպատականում միակ հիւանդանոցն է. ուր ծածկատանից էլ մեծ թուով հիւանդներ են գալիս. մանաւանդ աչքի հիւանդութիւն ունեցողները:

Աւրմիոյ գաւառում Ասորիները բազմաթիւ լինելով հայերից աւելի կշիռ և զիրք ունին և դժբախտաբար կարողացել են իրանց օրինակով վարակել: Ասորիները խիստ թեթեւաբար են Թուրքերի հետ ունեցած մօտիկ յարաբերութեան պատճառով: Բաւական կանայք և աղջիկներ թրքանում են. տղամարդիկ առհասարակ պանդխտութեան մէջ թափառում և խաչագործութեամբ են զբաղուում. կան միայն բաւական ճարպիկ հիւանդներ և օրմնադիրներ:

Հայերը բնակուում են քաղաքում և 28 գիւղերում՝ առհասարակ խառն թրքերի և ասորիների հետ. միայն Աերտապատ և Նախջևան—Թէփէ գուտ հայաբնակ են: Քաղաքում կան 45 տուն հայեր: ունին մի գեղեցիկաշէն եկեղեցի 1891 թուին կառուցած՝ սրբոյն Ստեփաննոսի անունով: մի քահանայ, մի ուսուցիչ և 30 աշակերտ: Ինչպէս ասացինք, հայերը ասորոց ազդեցութեան տակ լինելով շատ անգամ խառն խնամութիւններ են ունենում: մեծ մասամբ ասորերէն են խօսում, կանանց տարզն ևս ասորական է թրքականին շատ նման: Եթէ վաճառականութեան պատճառով Սալմաստից և Թաւրիզից եկած հայերը չլինէին՝ Աւրմեցի հայերին բոլորովին կորսուած կարելի էր համարել: Ինչպէս հայերը նոյնպէս և 250 տուն ասորիները բնակուում են երկու թաղերում՝ Նէնէ-Մէրիամ և Փաթմալի-խան-կըօլը: վերջինիս մէջն է հայոց եկեղեցին: Փրանչիսկեան կրօնաւորաց վանքը, կուսանոցը և ուսումնարանը. իսկ Ամերիկացոց մի մասը և Անգլիացիները Նէնէ-Մէրիամում են. այստեղ է նստում և նեստորական Ասորոց եպիսկոպոսը: Աւրմեցի հայերը մեծաւ մասամբ հիւան են, գինեփաճառութիւն նոյնպէս անում են, այգիներ ունին: Վաճառականներից մի մասը ընտանիքով այստեղ

են փոխադրուած: Կրօնասիրութիւն բոլորովին չկայ: Յարութեան և Ծննդեան տօներից բացի եկեղեցւոյ մէջ աղօթող տեսնելը հրաշք կարելի է համարել:

Աւրմիոյ դաշտի 800 գիւղերը իրար խառնուած մի անասհամն ծաղկազարդ պարտէզ են ներկայացնում. մի տփ հող անգամ չկայ անմշակ. քաղաքի իւրաքանչիւր գոնից սկսած մի քանի փարսախ տեղ խճուղիներ են շինուած և ուռնիներով հովանաւորուած. տեղացի խաներից Սուճաի գէօլլէն հասարակաց շինութեան համար շատ է աշխատել. այժմ սորա թոռներն ևս լուսամիտ մարդիկ են: որոնք, ինչպէս և Արրաճը—Սալմաստի հարուստ կալուածատէրը, իրենց գիւղացիների հետ մարդավարութեամբ են վարուում:

Հայաբնակ գիւղերից Նշանաւոր է Աերտապատ. քաղաքից 7 վերստ դէպի հիւսիս Սալմաստի ճանապարհի վրայ, ունի մի եկեղեցի: 1895 թ.-ին նորից կառուցուած վայելուչ կերպով 2 քահանայ, 1 ուսուցիչ, 25 աշակերտ: Տուրքերը՝ շատ ծանր են մի գաղափար տալու՝ համար իրբե նմուշ յառաջ բերելը: Աերտապատցիների վճարած հարկը իրենց աղային, որ այժմ մի կին է, շատ քիչ տարբերութեամբ ամեն գիւղերը միևնոյն հարկն են վճարում:

1. Գլխահարկ—5 1/2 զրան (1 ռուբլի 20 կ.)
2. Իւրաքանչիւր զլուխ 3 մշակի համ փոխարէնը 3 զրան (60 կ.)
3. Տան հարկ՝ 8 զրան (1 ռ. 60 կ.)
4. Իւրաքանչիւր տուն երկու հաւ
5. Գոմէշից 3 զրան 4 շահի (64 կ.)
6. Կովից 1 զրան 12 շահի (32 կ.)
7. Մատակ էշ 1 զր. 12 շի. (32 կ.)
8. Մատակ ձին 3 զր. 4 շի (64 կ.)
9. Առու հանկու համար ամեն զլուխ 2 մշակ
10. Աղային բրինձ ցանելու
11. Նէփրուզին իւրաքանչիւր տանից 15 շահի (15 կ.)
12. Հարսանիքին 2 զլուխ շաքար փետայից, 2 աղջկանից՝ Եթէ աղան տարրեր է, իսկ եթէ մի գիւղից՝ միայն 2 զլուխ
13. Սերմացուի կէսը աղայից է կէսը գիւղացուց, ամեն աշխատութիւն գիւղացուց. արդիւնքը կիսելուց առաջ աղան վերցնում է 17 1/2 ման (մի մանը մօտ 10 զրփանքայ է)
14. Բամբակի ցանքի մէկ թանափին 12 զրան (2 ռուբլի 80 կ.) թանափը հաւասար է 64 քաւ արշինի
15. Աւուշտի թանափին նոյնչափ
16. Այգիին դարձեալ 14 զրան մէկ թանափին
17. Ամեն մի այգիից 2 3—4—6 ման կուտ (տհաս խաղող՝ արի-կուտա հիւթը պատրաստելու համար)

18. Աղայի ցանած բամբակի, բոստանի, բրինձի ամրողը աշխատութիւնը գիւղացուց. այս մը-
շակութիւնները բռնում են 75 թանափ.
19. Զմրան հերթով գնում են աղայի բնակարանի
ձինը մաքրելու:

Բացի աղայական այս բոլոր տուրքերից սար-
փարաստին տալիս են տան գլուխ 2 դրան. իսկ բո-
ղոր, գատ պատահած ժամանակ կաշառք է առ-
նում ըստ կարգին:

Առհասարակ Աւրմիդ բոլոր գիւղերը, թուրք
թէ քրիստոնեայ, այս հարկերն ունին և այդ պատ-
ճառով այս վերին աստիճանի բարերբեր երկրում
գիւղացիներն իրենց ապրուստը հոգալու, տուրքի-
րը վճարելու համար ստիպուած են պանդխտել:

Նախջեան-թէփէ 75 տուն զուտ հայաբնակ
գիւղը քիչ քիչ աղայից գնում է իր կալուածները,
որով այս ծանր հարկերից ազատուում են: Այս
գիւղը ունի 4 քահանայ, 1 եկեղեցի, 1 ուսուցիչ
և 30 աշակերտ:

Աերջին ժամանակներս, երբ Պարսկաստանում
օրէնքներ գնելու խօսքեր են լինում՝ աղաները և
մօլլաները յուզուում են, վախենալով թէ իրենց
կալուածները ետ պիտի առնուին: Մինչև 120 գիւղ
ունենցող կալուածատերեր կան:

Տգիտութիւնը վերին աստիճանի է, մի քանի
ուսումնարաններ միայն կան լացուած. կանոնաւոր
և յարատե աշխատութեամբ կարելի է քաղաքում
և ուրիշ երեք գիւղերում՝ ինչպէս Նախջեան—թէ-
փէ, Հերտապատ և Ռահփայ՝ ուսումնարան ունե-
նալ միգասեան: Մինչև անգամ երկգասեան, որով
միւս գիւղերն ևս կարող են օգտուել:

Աւրմիդ դաշտում կան բազմաթիւ մեծ և
փոքր հողաբլուրներ, որոնք հին աւերակների հետ-
քեր են, ինչպէս Վեօք—թէփէ, Գապագ—թէփէ,
Պարա—թէփէ, Քիւլ—թէփէ և շն և շն. փորելով
գտել են սքանչելի և կարեւոր հնութիւններ:

Աւրմի քաղաքից 20 վերստ դէպ արեւմուտք
օսմանեան սահմանի մօտերը Թէրկէվէր և Մէրկէ-
վէր գաւառներում կան մի քանի ասորական գիւ-
ղեր, որոնց գլխաւորն է Մալմանա: Այս գիւղա-
ցիները իրենց դաշտարանակ ազգակիցների բողոքովին
հակապատկերն են կազմում՝ քաջ, աշխատասէր,
բարոյական, պանդխտութեան անսովոր, զրադուում
են հողագործութեամբ և անասնապահութեամբ:
սահմանակից օսմանեան քիւրտերի հետ յաճախ
ընդհարման մէջ են. գիւղատէր Սըրաճը-Մալթա-
նան մեծ քանակութեամբ պետական հրացաններ է
տուել զոցա ինքնապաշտպանութեան համար:

Աւրմիդ գաւառում է Սալմաստի հարաւային
արեւմտեան կողմում, Սոմայի Բրազօսթ լեռնային
գաւառակը, ամրողչապէս քիւրտերով բնակուած:
Այս վերին աստիճանի բարերբեր և ընդարձակ երկ-
րում առաջ բուական հայեր բնակուելիս են եղել:

գետ այժմ էլ կան շատ կիսակործան եկեղեցիներ
մի քանիսն էլ կանգուն, որոնք գոմի են վերա-
ծուած: Քիւրտերի հարստահարութիւնից ազատուե-
լու համար թողել են այս հիանալի տեղը և դաշ-
տերը ցրուել, այժմ կան շատ քիչ հայեր հատ
հատ ցրուած այդ բազմաթիւ գիւղերում: Բնակիչ
քիւրտերը 2 թշնամի ցեղեր են՝ Հիկակներ և Գաս-
տարցիք. կառավարութիւնն ամեն տարի սոցանից
փոքրաքանակ տուրք հաւաքելու համար մի քանի
դունդ զօրք է ուղարկում, որոնք ձմրան յաջողում
են մի քանի դատարկ գիւղեր աւերել: Արկու ցեղերի
թշնամութեան պատճառով Հիկակների մի մասը
ստիպուած են Սոմայի թողել և Սալմաստի արե-
ւմտեան լեռնոտ տեղերում բնակուել՝ իրենց կենդրոն
ունենալով ճարա, կամ ըստ թուրքաց Զահրի, բեր-
դասնը Զօլա գետի վրայ. սակայն պարսիկների
հետ չկարողանալով համաձայնել՝ ստիպուած են շատ
անգամ Ցաճկաց հողն անցնել և Սալմաստի լեռնա-
յին հայ գիւղերը կողոպտել, այնպէս որ Հախվէ-
րան, Քեապիկ, Ասլանիկ, Հմրանաւա գիւղերը
հետզհետէ հայերից դատարկուում են:

Աւրմիդ արեւմտեան հարաւային կողմում է Սրո
լիւր, ուր միսիօնարները գեղեցիկ ամարանոցներ են
շինել. այստեղ կայ սուրբ Սարգիս անունով մի փոքր
եկեղեցի, որ ուխտաւորի է հայոց և ասորոց. խեն-
թերին և լուսնոտիներին այստեղ են տանում և մի
քարայրում բանտարկում, մինչև որ առողջանան:

Աւրմիդ հայոց գրութիւնը խիստ անմխիթա-
րական է. երբ արթուն հովիւներ չլինին՝ դժուար
մի ազգ այսչափ տարբեր կրօնների և ազգութեանց
մէջ իր գոյութիւնը պահպանէ. քահանաները տը-
գէտ են, միայն Նախջեան-թէփէի Տէր Գրիգոր և
քաղաքի Տէր Գարեգին քահանաները իրանց կոչ-
ման արժանի կարող են համարուել միջավայրին
համեմատած: Տէր Գարեգինը մեծ աշխատութիւն
է գործ գրել Վերտամատի, Ռահփայի և Իքի-աղա-
ճի եկեղեցիների շինութեանց վրայ, Թէև ժողո-
վրդեան թուի համեմատ քահանաները նոյն իսկ
քիչ են, բայց կրօնական զգացման պակասութեան
պատճառով քիչ եկամուտ ունին. եթէ կալուածներ
չունենան՝ դժուար կարողանան միայն քահանայու-
թեամբ ապրել: Աւրմիդ հայերը բարք ու վարքով
ի հարկ է չեն համեմատուիր իրենց գրացի ասո-
րոց հետ, սակայն և այնպէս բաւական ազգուել
են: Ամուսնութիւնները շատ անգամ խառն են ըստ
ասորոց և վաղաժամ: Մերձաւոր ամուսնութիւն յա-
ճախ է պատահում մինչև անգամ 2 ծիւղից եղել է:

Աւրմիդ սարգայի, չամիչի, բրինձի, ուռի և
բամբակի ահագին արտահանութիւն կայ. սարգան և
չամիչ Երևան, Աստրախան և Վան են ուղարկուում,
այս տարի մինչև անգամ Տրապիզոն տարան, որով-
հետև Իզմիրի բերքը պակաս լինելով՝ եւրոպական
հրապարակները բաց են մնացել: Ծովալը հաղոր-

դակցութեան բաւական դիւրութիւն է տալիս՝ մինչև Թաւրիզ ճանապարհը երեք օրով կարճանում է, որով ճակքի մեծ խնայողութիւն է լինում: Եւ յոյժ հոգով 6 ժամից կարելի է լճի լայնքը կտրել, բայց շատ անգամ 3—6 նոյն իսկ 10 օր լճի վրայ մնում է նաւը: Մի քանի պարսկահայ վաճառականներ Ուրմիի և Մարաղայի սարգիի առևտրով իրենց բախտը շինել են. վերջին տարիներս Թաւրիզի հայ վաճառականներ առանձին ընկերակցութիւններ կազմելով սկսեցին այս առևտրով զբաղուիլ: Արտահանութեան ամենից մեծ գործ կատարողներն են Թուսանեանք և Ս. Արզումանեան:

Բ Ա Ր Ա Ն Դ Ո Ւ Ջ .

Աւրմի քաղաքից 20 վերստ դէպ հարաւ գրտնուում է Բարանդուղի գաւառը, որ Աւրմիոյ դաշտի կազմութիւնը և արգաւանդութիւնն ունի, ոտոգուում է համանուն գետակով: Այս դաշտում գրտնուած բազմաթիւ գիւղերից 13-ի մէջ հայեր բնակուած են խառն ասորիների և թուրքերի հետ: Բոլոր հայերը 203 տուն են միայն, կայ 4 եկեղեցի՝ Բարառի, Բէլանէթ, Գիզաթափայ և Թամաթար գիւղերում: Այս մի ուսումնարան չկայ, քահանայ էլ չունին. սահմանակից Տաճկաստանի դաւառից եկող մի քահանայ մի տարուց ի վեր հաստատուել է այստեղ և Աւրմիի Եթի—աղաճ գիւղի քահանաներից մին երբեմն այցելում է: Բոլոր հայերը բացի մի գիւղից կորցել են իրենց մայրենի լեզուն: Խոսում են թուրքերէն. անձանթ ճանապարհորդը դժուար կարողանայ իմանալ թէ այստեղ հայեր են բնակուում: Մեծերները շատ անգամ շարաթներով անթաղ են մնում: Միս ծխակաթարութիւններն էլ ըստ կարգին, միայն զարմանալի է որ հաստատամտութեամբ պահպանում են իրենց հաւատը և անհրաժեշտ կարիք ունեցած միջոց իսկ չեն դիմում կաթոլիկ կամ բողոքական կրօնաւորներին: Սոցա հաւատալեաց առաջինը կազմում է պահեցողութիւնը. պահք լուծողը հայ չի համարուում, արդէն տարբեր մի նշան էլ չկայ հայը ճանաչելու, Թէև մի ուսումնարան չլինելու ձեռնարկութիւն եղաւ, բայց շուտով խանգարուեցաւ: Աւրմիի գործակալը, որին յանձնուած էր այդ գրամը ուրիշ բանի յատկացրեց և թրքախօս Բարանդուղիները մնացին առանց ուսումնարանի:

Բարանդուղի բերքերը, տուրքի դրութիւնը, գիւղացւոց փիճակը նման է Աւրմիոյ գիւղերին:

ՈՒՐՄԻՍԻ ԼՃԻ ՀԱՐԿԱԿԱՆ ԳԱՆՈՒՆՆԵՐ.

Սուլդուզ. Աւրմիոյ լճի հարաւային կողմը գտնուում են Սուլդուզ, Սօփուճ—Բուլագ և Մի-

անդուար գաւառները: Խիստ բարեբեր և ցորենաշատ գաւառայրեր են սոքա՝ բնակչաց մեծագոյն մասը քիւրտեր, կան նաև գարափափաթ թուրքեր, հայեր, ասորիներ և հրէաներ: հայերն ինչպէս Բարանդուզում այստեղ ևս կորցրել են մայրենի լեզուն և աղգային առանձնայատկութիւնները. կարելի է սրանց համարել քրիստոնեայ քիւրտեր և ոչ թէ հայեր: Ուսումնարան չկայ բնաւ: հատ հատ երեցած քահանաներն իրենց մտաւոր և բարոյական մակարդակով երբէք բարձր չեն հասարակ ժողովրդից: Նազարէյում երեք տարի առաջ մի ուսուցիչ ուղարկուեցաւ թիֆլիզարնակ սալմաստեցի մի վաճառականի հաշուով, որ ժամանակին իրրեւ մեծ բարերարութիւն հռչակուեցաւ. ուսուցիչը միայն վեց ամիս կարողացաւ մնալ, օրով հետեւ բարերարը փող չտուեց այլևս: Հայերը բնակուում են 8 գիւղերում խառն միս ազգութեանց հետ: Բոլորը 120 տուն են:

Սուլդուզ գաւառում ընդէ հայեր քիչ են: այժմեան բնակիչներն եկել են Կերմանից և Սպահանից: բուն Սուլդուզիք Թաւրիզ, Երևան և Մարաղա են գաղթել: Պատմում են, որ Սուլդուզի ԿիօՏէլ գիւղը բազմահայ էր, ուժեղ և հարուստ շատ մեծիքներ կային. սոցա գլխաւորն եղել է Գարամիլիք, որի մասին հետեւեալն են պատմում: Մի օր Գարամիլիք Մարաղայում եղած ժամանակ Ուրմիոյ գաւառը Եւսուզ րէկը մարդ է դրկում ԿիօՏէլ որոշուած հարկն ստանալու: Այդ միջոցին հայերը մի հարսանեաց ուրախութեամբ զրազած են լինում: հարկահանները վատ են վարուում: որի համար Գարամիլիքի քոյր Խան—Խանըմը բարկանալով գանակուել է տալիս հարկահաններին և ականջներն ու քիթներն կտրած հաճախում: Եւսուզ րէկը այս անպատուութիւնը շտանելով մեծ գնդով գալիս է ԿիօՏէլ աւերելու: լուր է հասնում Գարամիլիքին որ դիմում է Մարաղայու Միւշտէյիտին, նա էլ օգնութեան լը պայման առաջարկում է հաւատափոխ լինել: Գարամիլիք առերես ընդունում է, որով գիւղը ազատուում է կոտորածից: Եւսուզ րէկը բաւականանում է միայն կոյոպտելով, Գարամիլիքը մեռնելիս կտակում է, որ իրեն ոչ հայոց և ոչ էլ թրքաց գերեզմանատան թաղեն. մինչև այսօր երևում է ԿիօՏէլի հարաւային կողմը 100 քայլ հեռի ահագին մի քարով Գարամիլիքի գերեզմանը: Սորա մահից յետոյ ցրուում են նաև չրջակայ գիւղերի հայերը: այժմ միայն եկեղեցեաց աւերակները և ընդարձակ գերեզմանատունները ցոյց են տալիս նախկին բնակչաց ինչ ազգից լինելը:

Սուլդուզ գաւառում կան նաև 100 տուն ասորիներ: Կ գաւառութեանց բաժանուած՝ բողոքական, կաթոլիկ, նեստորական և եպիսկոպոսական: հայերը սոցա հետ կապուած են խնամութեամբ: Ամուսնութիւնները կատարուում են՝ աղբիկ 15—18

խիկ տղան 18—24 տարեկան, Հարսանեաց հանգեաները աւելի քրդական և թրքական սովորութեամբ են լինում:

Սօփուճ Բուլազ. — Այստեղ հայեր քանկուում են 4 գիւղերում: 54 տուն են: ամեն բանով նման Սուլզուզի հայոց:

Միան — Գու — Ար. — Ճղարու և Թաթաղի գետերի մէջ լինելու համար այսպէս է կոչուում: ամբողջապէս քրդերով բնակուած է: 16 տուն միայն հայեր կան աւանում: բացի գորանից հայեր ապրում են ուրիշ 4 գիւղերում: բոլորը միասին 53 տուն:

Գրդական 4 գլխաւոր ցեղեր այս գաւառների հարաւային կողմը ընդարձակ մարգագետիններ գրաւել են: յաճախ իրարու հետ կռուի մէջ են. կառավարութիւնը չի միջամտում մինչև որ իրար կոտորելով յոգնին. ճանապարհների վրայ աւաղակութիւն և կողոպուտ սրանց սովորական արհեստն է: Թուրք և քիւրտ ցեղերը կրօնական վառ ատելութիւն ունին. Շիաների մուհարրէմի ծիսակատարութեանց միջոցին սիւննիները շատ անգամ անկարգութիւններ են յարուցանում: որ ընդհանրապէս արիւնհեղութեամբ են վերջանում: Թուրքերից էլ սիւննիներ կան: բայց շատ քիչ:

ՄԱՐԱԳԱ.

Սոհունդ և Մուրտի լեռանց հարաւային ստորոտում շինուած 14000 բնակչով մի քաղաք է: հռչակաւոր իր շրջագայից պողարեութեամբ: Հայերը 180 տուն են: մեծաւ մասամբ եկեւոր Ղարաղաղից: Միանգուարից: Տուղարղանից և Թաւրիզից: մնացեալ բնակիչները թուրքեր են: Շիա աղանդով կան և մեծ թուով բարիներ: բայց ծածուկ: Թուրքերը նոյն բարբորութիւնը չունին ինչպէս Ռւրմին. թէև նոյն զուանքը և գարշնքը կայ գեաւուրներից: բայց կախում ունենալով ստիպուած են կեղծել և չողորթութիւն հայերին:

Մարաղայի մօտից անցնում է Սօֆի գետը: որ իր շրջագայ դուարձայի տեսարաններով, ծառաստան այգիներով քաղաքի մօայլ և խոնաւոտ աղբեցութիւնը քիչ մեղմում է:

Հայերը բնակուում են քաղաքի արեւմտեան կողմն երեք թաղերում՝ Գլխալըք, Եկեղեցույ և Բարաջաֆէրի. պատուաւորն Եկեղեցույ թաղն է: ուր՝ վաճառական և հարուստ դասակարգն է բնակուում: Տները միայրկ են: քերը կրկնայարկ: անթուրծ աղիւսից շինուած. փողոցները նիւղաղտոտ սակայն կանոնաւոր շուկայ և քարվանսարաններ ունի: որոնց 3-ը հայ վաճառականների սեփականութիւն են:

Մարաղան նշանաւոր է իր բերքերի արտահանութեամբ՝ սերդէ: որ Արփից աւելի առատ և պատուական է: նաև նուշ ու մեղրամոմ: Թաւրիզեցի և Սալմաստեցի բաղմաթիւ վաճառականներ

այս արտահանութեամբ են զբաղուած. վաճառման հրապարակները նոյն են ինչ որ Ռւրմին: Թաւրիզցի վաճառականներն իրրե աւելի կրթուած՝ եկեղեցույն և վարժարանին աւելի են օժանդակում: Տեղացի հայերն անտարրեր են: իրենց տարադոմ: ածիլուելու ձեռով վարք ու բարքով թուրքերից չեն զանազանուած: խիստ աղաւաղուած մի հայերէն են խոսում: որ անձանթիւն դժուարահասկանալի է: Գրեթէ բոլորն էլ արհեստաւոր: հիւանդ զինագործ և խրմիչք ծախող են: կան փերեզակներ և մի քանի առեւտրականներ: զինագործները ամեն տեղ լաւ արհեստաւորներ են համարուում:

Կանայք ինչպէս Պարսկաստանի բոլոր քաղաքացի մէջ, այստեղ ևս ստրուկ են: զգեստները թէև ոչ բոլորովին թրքական: սակայն դարձեալ համեստութեան սահմանից բաւական հեռու են աղջիկները մարդու են գնում 11—15 տարեկան: Արօնական զգացումը ստուել է: կանայք իսկ եկեղեցիով չեն հետաքրքրուում: տարին երկու անգամ մատաղ կանեն եկեղեցու դրան: կաշին և ոտները քահանային թաժին հանելուց յետոյ՝ միւսը կշիռքով կը բաժանեն բոլոր տները: ննջեցեալների վրայ ողբ ու կական պարտաւորիչ է: քիւրտերէն երգերն աւելի յարգի են: եթէ մեռնողը պանդուխտ լինի: կանայք մի բարեգործութիւն են համարում նրա վրայ ևս ողբ ասել: Սալմաստ և Ռւրմի գաւառներում ևս տարածուած է մեռելների վրայ սաստիկ ողբալը՝ մանաւանդ եկեղեցուց:

Մարաղան ունի մի եկեղեցի: 78 տարի առաջ նորոգուած: հասարակ աղիւսաշէն և փայտածածք: երկու քահանայ ունէին: մին տեղացի տգէտ: ֆալ բացող: միւսը Տաճկահայ երիտասարդ Տէր Տաճատը: որ երկու տարի առաջ մեռաւ՝ ասպարէզը էի տգէտին մնաց: Աւսումնարանը շնորհիւ վաճառականաց ապահովուած է: 1896 թուին ունէր 2200 բուրլի դրամագլուխ: որից գոյանում էր 330 բուրլի: աշակերտների թիւը 45 է: 4 կարգի բաժանուած: մնայուն մի ուսուցչից զատ մի մօլլա էլ պարսկերէնի դասեր էր տալիս:

Մարաղայից արեւմուտք 40 վայրկեան հեռի է Բէհրիվայ գիւղը ունի մի փոքր եկեղեցի: քահանան Մարաղայումն է: այժմ միայն 12 տուն հայ կայ: վաղուց ի վեր քաղաք են փոխադրուել մեծ մասը: Խոճամիր գիւղը, որ 10 վերստ գէպի հարաւ է՝ 8 տուն հայ ունի: Մարաղայումն այս երկու գիւղից զատ ուրիշ տեղ հայեր չկան՝ գաղթականութեամբ Ռուսաստան են անցել: Մարաղայից մէկ ու կէս օր դէպ հիւսիս Տուղարղան քաղաքում գեա շէն է հայոց եկեղեցին: որ ունի մի ընդարձակ այգի հին կալուածներից մնացած: արդիւնքը Թաւրիզի Արամեան ուսումնարանին է յատկացրած: Թուրք կանայք են գալիս եկեղեցին:

(Կր շարունակուի)